Երտաշէս՝ որդի Երշակայ՝ թագաւորէ ամն ԻԸ։ Սա յառաջագէմ եղեալ՝ ոչ հաճեցաւ լինել Երկրորդ Պարսից, այլ զՊարթևաց և զՊարսից թագաւորն՝ իւրն Երկրորդ արար։ Եւ իբրև ել 'ի պատերազմ անհամար զօրօք, դիմեալ յարևմուտս՝ զԹագաւորն Լիթացւոց՝ զԱիւրսոս ըմբռնեաց և 'ի տապակի էարկ. զզնձի Յունաց Աթենացւոց՝ յաշխարհն իւր եբեր 'ի Հայս. զբոլոր արևմուտս և Ովկիանոս ծովն հնազանդեցոյց և ընդ հարկաւ արար։ Գրեալ են Յոյնք և Լատինք՝ զպատմութիւն սորա զովաբանութեամբ։ Զոր և Աղեկսանդրի նմանեցուցեալ ասեն. Աղեկսանդրի զօրացն փոշին զճառագայթս արեգականն արգելոյր, բայց զԵրտաշէսի զօրաց նետաձգութենէն՝ միջօրեայ արեգակն մթնայր, այսինքն՝ նետից շուքն ամպի պէս երևէր յերկինս. և մինչդեռ զՈվկիանոս ծովուն կային զօրքն սորա շփոթեալ հարան ընդ միմեանս և խոցեցին զԵրտաշէս. ուր և մեռաւ թագաւորեալ ամն ԻԸ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան